№ 10 ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՄԱՐՏ 25

1895

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՄԱՐՏ 25 № 10

«ՁԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիրել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՁԱՒԻՂ

«ՁԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՁԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հարկաւոր է մեզմ լինել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էլի Ուրմիայի հայերի մասին. Նամակ Ղազվինից. Նամակ Ուրմիայից. Նեկքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի Տեսութիւն.— Արտաքին լուրեր. Խառն լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Նամակ Ֆարուխին։

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԵԶՄ ԼԻՆԵԼ

II

Ինչ որ անցեալ համարում ասացինք, կրկնել ենք մի քանի անգամ էլ։ Որ «Շաւիղը» սկզբունք է արել իրեն՝ չարիքը դիմակազերծ անելու համար չը հետևել «մեղմ» կոչւող սիստեմին—դա արտափայլում է նրա իւրաքանչիւր տողից։ Նա, շատերի պէս համոզուած է նրանում, որ եթէ սխալուողը մի անհատ է որի սխալը չէ վնասում մի ամբողջ հասարակութեան, կարելի է երկայնամիտ լինել—«մեղմ» լինել. բայց եթէ գտնվի այնպիսի իրողութիւնների առջև, որոնք սերունդներ ապականելու գործին մղում տան և որոնք հասարակութիւնը յետադիմեցնեն, նրան լիմարացնեն, եթէ գտնվի այնպիսի հաստատութիւնների կամ բարքերի ներկայութեամբ, որոնք հասարակական կեանքից տիղմ գոյացնեն և այդ տղմի մէջ խորասուզեն սերունդներ—այն ժամանակ նա բացարձակապէս մի կողմ կը թողնի ստորութիւնից և վախկոտութիւնից գոյացած խոհեմութեան յատկութիւնը և ամենայն ոյժով կը յարձակվի այդ անձերի վրայ. որովհետև այդպիսի անձերից է, որ արտադրվում է չարիք և իր ճանկերի մէջ առնում հասարակութիւններ։ Էլ ինչ էք ուզում. չարը այնքան խոր արմատ է դրել մեր հասարակութիւնների մէջ որ նրա գոյութիւնը դարձել է սովորական. նրա ապականիչ բնաւորութիւնը ըմբռնողները եթէ չասեմ մի քանի, գոնէ քիչ հոգի են. իսկ ընդհակառակն նա ունի իր վարդապետողներն ու ապологիստները և մինչև իսկ նրան իբր «անհրաժեշտ» նկատող փիլիսոփաները։ Սրանք երբեմն մինչև իսկ անշահախնդիր և ազնիւ մարդիկ են լինում, բայց սերընդից սերունդ ապրած լինելով չարի ճնշման տակ, սնուած լինելով նրան իբր բարիք նկատելու բարոյականութիւնով, վտանգաւոր և վնասակար են համարում նրանց դէմ կռվելու ջանքերը և մինչև իսկ հասել են այն եզրակացութեան, որ այդ «չարիք-բարիքները» ազգութեան հիմքերն են, նրանց գոյութեան միակ միջոցը։

Իզուր չէր «Շաւիղը» այս տարւայ իւր առաջին համարում ասում հետևեալ դառն ճշմարտութիւնը. «քանի գնում է կեղտերը որպէս մաքրութիւն է՝ ընդունվում և vice versa»....

Թող չը կարծեն մեր ընթերցողները որ մենք պեսիմիստ (յոռետեսներ) ենք, որ ոչ մի լաւ բան տեսնելու ախորժ չունենք և որ վարդագոյն իրերն անգամ մեզ սև են երևում։ Ոչ այդպէս. մենք էլ կուզենայինք հրճուել, ուրախանալ մեր հասարակական լաւ կեանքով, ներել թեթև սխալներ, մեղմութեամբ վարուել տղայամիտների կամ լիմարների հետ, շատ-շատ, յորդորել անկարներին որ հեռանան ասպարէզից... բայց՝ մեր գործը ախր լիմարների, սխալ գործողների կամ ապիկարների հետ չէ միայն. ոչ, մեզ շրջապատել և մեր արիւնն ու համբերութիւնն են ծծում, մեր ոյժն ու մեր եռանդն են մարում աւազակներ, լիրբ խաբեբաներ և սերունդներ կեղտի մէջ թաւալեցնելով՝ օգտուել կամեցող խմբեր... մեր մէջ ոյժ են ստացել ամեն տեսակ գառնազգեստ գայլեր, կրթութեան դրոշով խաւար սփռողներ և կողոպտողներ, լրբութեամբ ստող «ճշմարտախօսներ» և ամեն տեսակ սրբութիւնների տակ ապաւինած և յանուն նրանց՝ մեր այլասերութեանը նպաստող դասակարգեր...

Մեզմ վարուել դրանց հետ, լռել, շոյել նրանց. էլի խոհեմ լինել, «կամաց-կամաց» շարժուել...

Ի՞նչ կը հրամայէին մեզ անել այդ բարեմիտ «խոհեմները», երբ գտնվէին օրինակ այսպիսի իրականութիւնների առջև։

Բուական ժամանակ է որ Ատրպատականի առաջնորդ է նշանակուել մի եպիսկոպոս, որի բոլոր գործունէութիւնը կայանում է նրանում, որ մատների միջից է նայում իր ձեռնադրած և Սալմաստ, Խոյ կամ Ուրմիա առաքած հերոսների քաջագործութիւնների վրայ։ Այդ հերոսներն էլ իրենց կարգին կողոպտում, գերփում, պղծում են ամէն հաստատութիւն, արդարութիւնն են պաշտպանում՝ նրան բռնաբարելով, կրթութիւնն են տարածում՝ նրան իբր կողոպտելու միջոց գործածելով և որոնք, ընկերական հաստատութիւններ—ամուսնութիւն և այլն—ձևերը պահպանել կամեցողներին խիստ թանգ, արեան գնի են նստեցնում։ Բացի նրանից որ այդ առաջնորդը տարին մի քանի հատ անտաշ-ապիկար անձերի հացի տէր դարձնելու բարի միտումով քահանայ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՖԱՐՐՈՒԽԻՆ

Սիրելի Ֆարրուխ.

Քիո կիրածը կառթացիմ. չ'ՁԲԸԼԵՍ տիւնիկ, հալ քիւյը քցիրես Սալմաստ. մկա վար տեղ ըլէսեն—նստէսեն, քիո խօսկնի. ընձիկ են մուզամաթ անէլի. ասէսեն քիո ընկերը ծրուվիրի, տալուտիրի, կազէթի մէջը վիրը խապիրի կծիրի. մնացիր եմ շիվար—տարկարդան. մէ մառթ չրկայ ասի տիւ եուր, տեսուչը եուր, տիւ եուր կարքատուիչը եուր. տիւ մէ եալանչի-փալան, պատ տրօղ, քելի թեխ քիո զուռնա փչելը. տիւ չ'եսնալի տանց զրմէն մէկը-մէ կծոտեն. ապօվիր ես, կանօխ մէկէլ եախտա կբուզնի տանց ձեռէն։

Էն Սիկլիսանը, ես չ'նմէրնալի ինչու մկա, որ տիւ կիր—զալամ գինաս, տիւն ես էր պակաս, ընկար մբոստօղքէրու ջարգան. պանրքերս զզվաս։

Ցնաւեր, քեզի գօրայ ի՞չ կայ, փարթըլտը կշտէն ինչի կախի, փշտօվ եա ջղդան. եա չէ տեսուչը մրուսը բիզացուցիրի. վավ տանը քաշիրի մէյդան, թօ օփտէն ըկայ, տիւ չեսնալի, տանք ըմէն մեր իշխանքէրու օյիննի. «էշը խանիր են տնիսը էլ չենալի էջուցել». մեր իշխանքերը մառթ ըլենէր, էտ չաթուքասանքերը չենէր լավի Սալմաստ, տայնը-վրայ

Ինչ ասեմ, նը քիո ասածը նը դանցը, եարէք վարժատունը չինէք Ղալասար ինան Փայջուզի մէշտեղը, մէ քանի օթաղ աւել չինէք էն զատ տեղրանքի տղաները իկան մնան քիշերքերը տաղ։

Կիրիր ես տեսուչը ինան վարթպետը թուխտ են չուռկացուցէլի. առչինը, խոզը լցեմ տիանց կոտին, որ քիո լմանքէրու ձեռ քաշելուն մուխտաջ չլեն, ինչի կիտը մէ զատ արած չլեն, որ էսօրվան օրը գինքերը չար-նաչար ուրենցը կիօվան. բինչ անեն, վավ խասաւ, թիքեց տիանց իրեսը, մրկայ թուխտ են չինելի, որ օրօխկեն Թէլիզ, կիրեն կազէթի մէշը, կազէթը իկայ Սալմաստ, խալխը կառթան, ասեն եար տե, տանք մէ զատ են էլի, մենք չենք գիտցի. այ, չես ավատա, կառթա Թլֆոն ճոչ կազէթը։

Խա, մտէս կինաց, մէ զատ կիտը խառցուցեմ էր, էն որ կէրիր ես էր, որ ճոչ առաջնորթը մէ «կօնձիստօրի» չինի, ես չխասկցամ. եանը ինչի չինի, եա իշխմայի. եա չէ կօնձիստօրով ի՞չ կանեն. մեխկս ի՞չ պախեմ, տարմէն խելքս զատ չկուեց. մէյն էլ կիրիր ես էր, Տէր Ակօփին ինան Տէր Մկրտիչին, կիտը անի կարկատրիչ, կառթացիմ, չկառթացիմ, զարկանդա կոխեց, ասիմ չըլի տիանցը էլ օրօխկի Սալմաստ. անունը կարքատեսեն ասասեն եմ տանան Էթատ Խանի.

Մէ հաւուր թօ քիո ասածը ըլի, որ տանք էկան Սալմաստ մառին, բը մեր ճօչերու աքածը եուրի. էտ օխտը տարի ի, ասէսեն կիտը մէ ճոչ վարժատուն չինենք Սալմաստի մէշտեղը, վար-քասը ժօղնուեն, օխտը լեզու մֆթայ կառթան։ Ասէսեն կիտը մէ ճոչ տեղ չինենք թատրօնի խմայ։ Ասեսեն էր կիտը մե օթաղ չինենք մէշը լինքը թուխտ լցենք, խալխը էթայ մֆտայ կառթայ. բը եուրի տանք. անջաղ ճոչ-ճոչ փրթել գինան։ Նրէկ ձլուզի լանը կիրիր էր Մօսկով ինան Բաղու, եսնամ հանդրդայ փող կայ, իշկասեն տանցը, այամ մէ զատ բաշլամիշ անեն, խայեր խազար մանէթ կօրօխկեն. ընչի չեն անելի. թօ մե իյնեն պանի տէմը, վալլահ, հէնց անփող կշինենք. մէշկամ վար կեղը խայիր սարակ չի տայ, վար կեղը սէլերը չի լծի քար-կիր կբրի. հալա իսկի զատ չրկայ, եանդ Տէր Ավտիքը շուն էր կռի, ասէս էր կիտը մեր կեղը չինվի. Ղալասարցիներն էլ ասէսենէր կիտ մեր կեղը չինվի։ Վավ գինայ ինչ են զուրցալի։

Ցնաւեր, քեզի գիօրայ ի՞չ կայ, «զուէթը նստիրի քարին լալի», ինչ ուզէսեն թօ անեն. քեզի հուշտ են արի քցի մէյդան, զինքերի բէրընքերը սրփիրեն, քաշիր են եա։

Հնար ունիս, քէյի ասա, ախպէր, ինչի էր

կռվելի, նը քիո ասածը նը դանցը, եարէք վարժատունը չինէք Ղալասար ինան Փայջուզի մէշտեղը, մէ քանի օթաղ աւել չինէք էն զատ տեղրանքի տղաները իկան մնան քիշերքերը տաղ։

Կիրիր ես տեսուչը ինան վարթպետը թուխտ են չուռկացուցէլի. առչինը, խոզը լցեմ տիանց կոտին, որ քիո լմանքէրու ձեռ քաշելուն մուխտաջ չլեն, ինչի կիտը մէ զատ արած չլեն, որ էսօրվան օրը գինքերը չար-նաչար ուրենցը կիօվան. բինչ անեն, վավ խասաւ, թիքեց տիանց իրեսը, մրկայ թուխտ են չինելի, որ օրօխկեն Թէլիզ, կիրեն կազէթի մէշը, կազէթը իկայ Սալմաստ, խալխը կառթան, ասեն եար տե, տանք մէ զատ են էլի, մենք չենք գիտցի. այ, չես ավատա, կառթա Թլֆոն ճոչ կազէթը։

Խա, մտէս կինաց, մէ զատ կիտը խառցուցեմ էր, էն որ կէրիր ես էր, որ ճոչ առաջնորթը մէ «կօնձիստօրի» չինի, ես չխասկցամ. եանը ինչի չինի, եա իշխմայի. եա չէ կօնձիստօրով ի՞չ կանեն. մեխկս ի՞չ պախեմ, տարմէն խելքս զատ չկուեց. մէյն էլ կիրիր ես էր, Տէր Ակօփին ինան Տէր Մկրտիչին, կիտը անի կարկատրիչ, կառթացիմ, չկառթացիմ, զարկանդա կոխեց, ասիմ չըլի տիանցը էլ օրօխկի Սալմաստ. անունը կարքատեսեն ասասեն եմ տանան Էթատ Խանէն էնդրդա չեմ վախենալի իշ կառքատրիչէն ինան տեսուչէն. անընքերը լսելուն Քիրիստոս աման.... եմ ասէլի.

Մէ մազալու զատ ասեմ, էրէկ լսամ, որ քիո կիրածը սեացուցիրեն էր, վրան քիումուրով ուրենց շաքըլը քաշիր են էր, կազէթի չորս թեխը անընքերը կիրիր են էր, տրիրեն էր ետեն էր օրօխկի Թէհրան։ Սէվտի էտ, բէնա Մուխսի Դուլօենց Օհանէսին էլ ծուվեցուցեր էս. տրիրի ուր կազէթը եաի օրօխկի, խեղճ կազէթ կերօղին եքա գիան կ'կպնի. դոր չը ծուվեմ, տանք ըմէն քիո պանի։

Խուլասա, էդ թուխտը քիո ձեռը խասնելուն մի երկու ապսպրանք ունեմ կխասուցես տեղը.

Սալմաստի իշխանքերուն ասա թօ մրդայաթ ըլեն վարժատան փողը բանը չքցեն էտ տէն ըկացողքերու ձեռը։

Տեսուչ ինան կարքատուիչին էլ ասա- խէրիքի, Սալմաստ լուսաորվաւ, քէլէք մրդայ ձեր երկիրը լուսաւորեցէք.

Քեզիկ էլ իմ ապսպրանքը էդ ըլի որ մէյն էլ կազէթ չկերես եօխսա որ լսեն, էր ունդ կրխմեն տիւ գինաս որ քիո թաղլիթը իմնի քո աբուրը իմն. վախենաս եմ տեանք քո գլօխը ուտեն։

Դհօլչի Կիրկոր.

(Խուրամ Արզումանեան)

է ձեռնադրում և ասպարէզ հանում, բացի այն որ իր սաեղծած «կոնձիստորիան» մի կոլլեկտիվական հարստահարող մարմին է կազմում, բացի այն որ ինքը—առաջնորդը ներկայանում է որպէս մի լիովին աներդունակ մարդ վարչական գործերում, այլև իրեն նմանները և աւելի վատերը՝ ձեռնադրելով որպէս վարդապետ—փոխանորդ, որպէս քահանայ գործակալ և որպէս կրթական տեսուչ՝ աւարի է սփռում Ատրպատականի ամենախոր անկիւններն իսկ, այնտեղ ծծելու և մրզելու համար հայ ազգաբնակութեան մէջ եղող հիւթի վերջին կաթիլները, «վասն ամենամեծ փառացն եկեղեցւոյ» և յանուն կրթութեան:

Այդպէս, Դավրէժից խմբագրութեան եկած ոչ մի թղթակցութիւնը ուրախացուցիչ լուր չէ բերում. մէկը թւում է առաջնորդի գործերը, միւսը գանգատում է լեռներից հաւաքած և քահանայի վերարկու հագցրած արարածներից, երրորդը մեզ հաղորդում է որ երիտասարդութիւնը Բաքոսի տաճարում ազգասիրաբար խունկ է ծխում, իսկ չորրորդը յայտնում է որ դպրոցներն էլ ազատ չեն մշտակայ կռիւների ասպարէզ դառնալուց...

Ի՞նչ անել այդպիսի իրականութիւններ առնելով. մեղմ լինել, թէ լռել կամ ըստ «խոհեմ» անձերի «կամաց-կամաց» հարւածել...

Դառնանք այժմ մի ուրիշ կողմ:

Հ. Վ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՆ ՈՒՐՄԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ
(Մի օրիորդի գրած)

—

Ես էլ եմ ուզում գրել. բայց չէ որ առաջ հարկաւոր է ասել թէ ով եմ ես և որտեղից եմ գրում. դրա համար էլ, ես մի ուրմիացի օրիորդ, կը կամենայի մի քանի խօսք ասել այն ժողովրդի մասին, որի զաւակներից մէկն էլ ես եմ:

Մի ձանձրանաք խնդրեմ, առաջուց ասում եմ որ երկար չեմ գրիլ: Շատերը գրել են Ուրմիայի մասին, բայց ախր ուրիշ բան է մի տղամարդու, ուրիշ բան է մի օրիորդի գրած:

Ամենից առաջ մի քանի խօսք իմ մասին:

Այս ամառ քննութիւններից յետոյ գնացի Ուրմի՝ ծնողացս այցելութեան. հինգ երկար տարիներ են անցել այն օրից, երբ ես հեռացայ իմ հայրենիքից՝ Ուրմի գաւառից. թէև իմ դպրոցական հայրենիքից հինգ տարով բացակայ գտնուելը անսովոր և Պարսկաստանցի, գլխաւորապէս յետին գաւառացի օրիորդի համար տարօրինակ երևոյթ էր, այնուամենայնիւ սիրով տարայ զրկանքներ, թուր, մուր, նախատինք իմ հայրենակիցներից, որովհետև նրանց կարծիքով շատ ամօթալի բան է մի օրիորդի համար, հեռանալ իր հայրենական օճախից, իր ծնողների մօտից, նրանց անմիջական հսկողութիւնից. բայց ինձ յաջողեցաւ, բաղդի բերմամբ, ընկնել Դավրէժ. բողոքականաց օրիորդաց դըպրոցում ընդունեցայ գիշերօթիկ աշակերտ բոլոր ծախքերս դպրոցի հաշւով, թէպէտ ծնողքս այնքան հարուստ են, որ ամենայն դիւրութեամբ կարող էին իմ բոլոր ծախսերս հոգալ ոչ միայն Դավրէժում, այլ և մինչև անգամ արտասահմանում: Այս խոստովանութիւնով ես նպատակ ունեմ ցոյց տալ մեր պարսկաստանցի ծնողաց վերին աստիճան տգիտութիւնը. նրանց աչքերը այնպիսի թանձր քողով է ծածկուած, որ իրենց զաւակների կրթութեան համար փող ծախսելը բոլորովին աւելորդ, աննպատակ ծախս է համարվում. իսկ աղջիկ զաւակների համար սա մի չը լսուած, հրէշաւոր բան է. ես գիտեմ, պարսկաստանցի մեր ծնողները կը վիրաւորվեն այս խօսքերից, բա՛յց ինչ արած, դա մի անուրանալի ճշմարտութիւն է, իսկ ճշմարտութիւնը թաքցնել ամօթ է:

Ուրմիոյ 300 տուն հայերը, բացի մի քանի ընտանիքից որոնք բնակուած են քաղաքում, ասորի և թուրք ազգաբնակութեան հետ խառն ցրւած են Ուրմիայի գիւղերում և գլխաւորապէս պարապում են երկրագործութեամբ, այգեգործութեամբ, արհեստներով և խաբեբայութեամբ կամ խաչագողութեամբ, որ այս վերջինները խումբ—խումբ, ամեն տարի ընկերակցութեամբ ասորիների, դիմում են Ռուսաստան՝ թափառելով գիւղից—գիւղ, մի քանի անգիր սերտած «Ալելուիա սուխ ու սխտոր» բառերով տգէտ ռուսներին խաբում, խաբխբում և հարուստ աւարով, կողոպուտով վերադառնում, մնում կեր ու խումով փչացնում և, ինչպէս իրանք են ասում՝ քամուց եկածը, քամուն տալիս, ու կրկին դիմում նախկին արհեստին. սրանք իրանց արհեստով անարգված են ժողովուրդից և ամենաադքատն են:

Իսկ առաջինները՝ շնորհիւ իրանց ընտրած պարապմունքների և բարեխնամ Վեհ. Շահի մասնաւոր հոգածութեան՝ տնտեսապէս ապահոված են, և իրենց աշխատութեան արդիւնքը հետզհետէ բարձր է գնահատվում:

Արգասաւորութեան, պտղաբերութեան կողմից Ուրմի գաւառի հողը Ատրպատականում առաջին տեղն է բռնում. գարնան սկզբից մինչև աշնան վերջը ամբողջ գաւառի ազգաբնակութիւնը բուռն եռանդով զբաղվածէ դաշտային գործերով, իսկ իրենց աշխատանքի հասոյթը հաւաքելուց և աւելորդ մասը ծախելուց յետոյ, բոլոր ձմեռը ասորի և հայ ժողովուրդը, նախնիքներից մնացած՝ դարեւոր մարմնացած սովորութեան պէս, անձնատուր են լինում զւարճութեան, թէպէտ քիչ չի պատահում, որ միւս եղանակներում տներին մի քանի օրեր գործադուլ անելով՝ քէփ ուզողի ետևից ընկնեն: Անյիշատակ ժամանակներից մնացած մի սովորութիւն է տիրում Ուրմիոյ քրիստոնեայ ժողովրդի մէջ որ գարնան և ամառվայ ժամանակները մի մի, շաբաթով թէ քաղաքի և թէ գիւղերի ժողովուրդը մեծ պատրաստութեամբ դուրս կը գան դաշտը և կեր ու խումով հազարներ կը վատնեն, ջահել օրիորդներն ու երիտասարդները խառն ի խուռն թև թևի տւած՝ պարսկական աններդաշնակ նաղարայով քրդական հալլի կը խաղան. պատահում է, որ մի քանի հայ կամ ասորի օրիորդներ փախցնում են հայերը, ասորիները և երբեմն էլ լեռնաբնակ քրդերը կամ լօթիները, հէնց մի այսպիսի դէպք պատահեց անցեալ ամառ և ես ականատես եղայ:

Թուրքերի, ասորիների և հայերի հագուստի տարազը նոյնատեսակ է, արտաքուստ ոչինչով չեն զանազանվում միմեանցից, իսկ տիրող լեզուն գրեթէ ասորերէնն է որովհետև գաւառի ազգաբնակութեան մեծամասնութիւնը կազմողն էլ ասորիներն են բացառապէս. Թուրքերն անգամ խօսում են ասորերէն, ուր մնաց մի բուռն հայերը, որոնք ցրված խառն բնակված են նրանց հետ գիւղերում. հայերի և ասորիների խնամութիւնը վաղուց ընդունված մի սովորութիւն է:

Կրթական գործը Ամերիկացի միսիոնարների շնորհիւ ասորիների մէջ շատ ծաղկած է, բայց ցաւօք սրտի պէտք է նկատել, որ դարերով սարկացած, ճնշւած խեղճ ասորի ժողովուրդը անցեալ 50 տարիների ընթացքում չի հասել ինքնաճանաչութեան,..... հետևապէս և մինչև այսօր նրանց բոլոր գործերը ղեկավարվում է միսօնարների ձեռքով, իսկ հայ նախապաշարված ժողովուրդը, թէև մեծաւ մասամբ խօսում է ասորերէն, զգվում է նըրանց լեզուից, չի ուղարկում իր զաւակները ասորիների ուսումնարանները, որովհետև առասպելների վրայ հիմնված է թէ՝ հայերէննէ դրախտի լեզուն, այսպէս դեռ մնում է իր նախկին անկրթութեան մէջ:

Վերջին տարիներս նախանձելով ասորիների վրայ, հայերը առանձին սիրով են վերաբերվում դէպի կրթական գործը. ամբողջ գաւառում չորս ուսումնարան կայ. մէկը քաղաքում, որի գոյութիւնը առաջինն է, բայց այս տարի ուսուցիչ չը գտնելու պատճառով փակւած է. երկրորդը՝ Նախջևան-Թափայում, որի գոյութիւնը երկու տարի է, սա ևս տարւայ սկզբից ուսուցիչ չունէր բայց ինչպէս լսում ենք պ. Մ. Բաղդասարեանցը որՍալմաստ գաւառում որբանոց պիտի բացէր, եւ չի յաջողվում, այդ գիւղի ուսուցչութիւնը յանձն է առնում. երրորդը՝ Իսալու գիւղում, և չորրորդը՝ Ռահվա գիւղում. վերջինս բողոքականների կողմից է. տղայոց ուսումնարանին կից կայ և օրիորդաց ուսումնարան. ցանկալի էր որմիւս գիւղերն օրինակ առնէին վերջինից և օրիորդների կրթութիւնը աչքաթող չանէին, որովհետև ազնիւ, կրթւած սերունդ պատրաստելու համար, երկու սեռի կրթութիւնն էլ անհրաժեշտ է:

Աշակերտուհի

ՆԱՄԱԿ ՂԱԶՎԻՆԻՑ

—

7 Մարտ 95

Ամսոյս 1-ին տեղի ունեցաւ տեղոյս ուսումնարանը վերաբացելու երրորդ ժողովը, որին ներկայ էին Ղազվինի հասարակութեան մեծամասնութիւնը: Ատեանը բացուեց Եղբարք Թումանեանց տեղոյս գործակալ պ. Աւագ Մելիք Յովսեփեանցի մի կարճ ատենախօսութեամբ. բացարձակ քւէարկութեամբ հոգաբարձու ընտրուեցան պարոնայք Ա.—Մելիք Յովսէփեանցն ու Գրիգոր Տէր Յակովբեանցը:

Հոգաբարձութիւնը անմիջապէս ձեռնարկեց մի հանգանակութեան և տեղոյս վաճառականական երիտասարդ գործակատարների կողմից ստորագրուեց ի նպաստ ուսումնարանի մօտաւորապէս 250 թուման: Բացի դրանից մի քանի անձինք տարեկան տուրքեր ընդունեցին: Ուսումնարանը բացուեց մի առ— ժամանակեայ ուսուցչով:

Գովելի է նորընտիր հոգաբարձուների ցոյց տուած եռանդը: Ինչպէս տեսնում ենք, այս անգամ ամեն բան կանոնիտակ է դրվում և Ղազվինցիները ամեն միջոցներ չեն խնայում իրանց փոքրիկ ուսումնարանը կայուն պահելու համար:

Սեհոն

ՆԱՄԱԿ ՈՒՐՄԻԱՅԻՑ

—

12 մարտ 85

Այս օրերում լսում ենք, թէ Արսէն վարդապետը Սալմաստից գալու է այստեղ. թէ ինչ նպատակաւ յայտնի չէ. դրա համար պատրաստութիւններ են տեսնվում թանկագին (!!) հիւրին ընդունելու:

Արդեօք բերելու՞ է նա իր ուղեղից դուրս եկած ծրագիրը. կարծեմ ուզումէ ուրմեցիներին էլ չ'զրկել իր բարեշնորհումներից, իր հանրօգուտ (?) կարգադրութիւններից. խեղճ, ողորմելի ուրմեցիներ, ինչպիսի խամթաբալաների էք հանդիպում. խամթաբալաների, որոնք հիմնովին աւերում են ձեզ բարոյապէս և նիւթապէս, որոնք քանդում են ձեզ, ձեր հալալ, քրտինքի աշխատանքը խլելով ձեզնից. ապրի, շատ ապրի առաջնորդը իր ձեռնադրած և Ատրպատականին նւիրած այդ նւէրների համար, յայտնում ենք շնորհակալութիւն:

Ուրմիոյ գործակալն էլ հօ Աստուած հեռու տանի. էլ չը մնաց միջոց որ չը գործադրէր իր եռանդը Սրբազանին կամ այս ինչին, այն ինչին յայտնելու համար: Այսօր այս ինչ գիւղումն է, միւս օր այն միւս գիւղումն: Էլ մեռել չ'մնաց որ չ'թաղէր. հօ կենդանիներին էլ հոգւով մարմնով է թաղում. մի ուրմեցի գիւղացի հարցնում էր ինձանից. «մի՞թէ դորան առաջնորդը ուղարկել է այստեղ մեռելթաղի պաշտօն կատարելու». բա ինչ անի..... պատասխանեցի ես. չէ՞ որ մի գործով պէտք է պարապի. լինի այդ ազնիւ, կամ թէ անազնիւ:

Գործակալը մի քանի գիւղեր իրեն դէմ է գրգռել իր անտանելի տմարդի վարմունքով. օրինակ Կէլտապատ հայաբնակ գիւղը սաստիկ ատում է նորան և նշանակութիւն չի տալիս նրա Ուրմիում ունեցած ներկայութեան. թէ ինչ է պատճառը՝ ահաւասիկ. յիշեալ գործակալը միացած վերոյիշեալ գիւղի տէրտէրի հետ, տանջում է խեղճ գիւղացիներին իւր սովորական չ'հաս չ'հասները» շարունակելով և ստիպելով նրանց աւելի փող վճարելու, քան իրանց կարողութիւնը, նիւթական միջոցները ներում են. ահա այսպէս, միացած խաւարամիտ միջնադարեան տէրտէրի հետ, նրանք գործում են յօգուտ իրենց քսակին և ի վնաս հարստահարւող, թշուառ գիւղացիներին—իրանց արիւնակից եղբայրներին:

Եւ այդ գործունէութեան տէր մարդը ահա թէ ինչ է գրում իւր մի նամակում սրբազանին. «սրբազան հայր Ուրմիոյ գիւղերը չափազանց կարօտութիւն ունին գաղափարական քահանաների և այլն»: Արդեօք, զարմանալի չէ՞ սիրելի ընթերցողներ, որ մի կոյր, իրեն աչքերը բացւած կարծելով (միայն երազում) իւր կոյր ընկերի աչքերի համար

էլ բժիշկ խնդրի։ Ահա թէ ինչ է խրնդրել մեր կոյրը *). շատ ծիծաղելի է։

Գործակալը իր յատուկ կեղծաւոր քաղցր խօսակցութեամբ մեծ գործ է տեսնում պարզամիտներին դէպի իրան քաշելով և իրան միայն յատուկ, «Հոսհոսական» ազդեցութեամբ ներգործուած բնաւորութեամբ. իր անբովանդակ, անմիտ քարոզներով իրեն գաղափարական է ուզում ձևացնել, «ինքնաճանաչական» գաղափարների. (մինթէ ինքը գիտէ թէ ինչի մէջ է կայանում ինքնաճանաչութիւնը կամ թէ ինչ են «ինքնաճանաչական» գաղափարները) երբեմն անկապ, հատուկտոր խօսքերով բացատրած անմիտ քարոզներով կամենում է իրան ժողովրդականացնել և քուջաբար դուրս գալով եկեղեցուց, հարցնումէ թէ ինչպէս էր, լաւ էր։ Եղջաբար խորհուրդ կը տայինք նրան, իւր առաջին գործով պարապել, քան թէ ինքնաճանաչութեան վրայ անմտաբար բարբառել. մեր համեստ խորհուրդն էլ այս է որ գաղափարի մասին այն ժամանակ բերանը բացի, երբ լաւ կարող է ըմբռնել նրա նշանակութիւնը, որովհետև նրա բանած այդ ընթացքը մեղանչում է գաղափարի դէմ։ Աստուած դրա կորած խելքը գլուխը քերի։

Ց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պարսից Նովրուզի (Նոր տարի) օրը, խմբագրութիւնս շնորհաւորական նամակով դիմեց Մամուլի Նախարարութեան Վսեմ. փոխ նախարարին, յայտնելով բարեմաղթութիւններ և երախտագիտութիւն, նորա առ հայ մամուլն ունեցած մասնաւոր շնորհների համար։ Խմբագրութիւնը ստացաւ Վսեմ. փոխ նախարարից հետևեալ ինքնագիր պատասխանը։ «Սիրելի բարեկամ։ Նովրուզի առիթով Ձեր սիրալիր շնորհաւորութիւններն և բարեմաղթութիւնները շատ ուրախ և գոհ արին մեզ։ Ցանկանում եմ որ Ձեզ և ձեր ազգին ևս միանգամայն, այս նոր տարին շնորհաբեր լինի և նպաստաւոր և որ ձեր օրերը միշտ առողջութեամբ և ուրախութեամբ անց կացնէք»։

Ստորագրութիւն և կնիք՝ Մօխիր-էդ-Դովլէ։

—

Դավրէժից, Նորակազմ Հայուհեաց ընկերութեան մասին հաղորդում են մեզ հետևեալ տեղեկութիւնները։ «Ժողովներից յետոյ ընդունել է նախօրօք մշակուած մի կանոնագիր և ընտրել են վարչութեան անդամներ։ Կանոնաց այդ ընկերութեան գլխաւոր նպատակն է 1) Բերդաթաղում բանալ մի կար ու ձևի արհեստանոց։ 2) բանալ մի մանկական պարտէզ և 3) հոգալ Ս. Աննայեան դպրոցի չքաւոր աշակերտուհիների դասական պիտոյքը։ Անդամավճար է նշանակուած տարեկան 2 թուման։ Ցառաջիկայ տարին (ըստ մարտ 3-ի ընդհ. ժողովին) կը սկսեն գործադրել առաջին և վերջին նպատակները։ Մի ամսուայ ընթացքում հաւաքուել է 320 թուման անդամավճար։

*) Այս նամակը տէր հայրը ինքը կարդացել է ինձ մօտ.

—

Նոյն տեղից գրում են, որ Թեմական առաջնորդը իր նոր ձեռնադրած մի քահանայի համար ուսուցիչ է վարձել որ հայերէն սովորեցնի։ Այդպիսի 2 քահանայ էլ շուտով պիտի ձեռնադրուին մէկը Ալչամուլքի, իսկ միւսը Ղարադաղի համար։

—

Նոյն տեղից գրում են։ «Ընթեր. դրադ. ընկերութիւնը» մի երեկոյթ տուաւ յօգուտ նոյն ընկերութեան, մարտ 11-ին։ Երեկոյթը-որպէս գրում են մի քանի թղթակիցներ—յաջող է անցել։ Թղթակիցներից մէկը հաղորդում է որ փողոցի պատերի վրայ խայտառակող յայտարարութիւններ էին կպցրել վերոյիշեալ ընկերութեան մասին։

—

Չը գիտենք որքան ճիշտ է, բայց մեզ Դավրէժից հաղորդում են որ Թեմի առաջնորդը իր ամբողջ ուխտայով,այսինքն Սալմաստի գործակալով և տեսուչով, մտադիր է հրաժարական տալ։ Աւելի լաւ է ուշ քան երբէք։ Թեմական առաջնորդը պարտաւոր էր շուտով անել այդ և պատուել Թեմին իր և իւրայինների... հեռանալովը։

—

Կովկասի թերթերը հաղորդում են որ վերջապէս Թեմերը ազատւեցին մի եպիսկոպոսի ձեռքից, որպիսին էր Նիւբեղ եպիսկոպոս Սրապեանը։ Այդ մարդը հարինքից մեռել է Նոր Նախիջևանում։ Եթէ եգիպտական դատաստանը գոյութիւն ունենար, արդեօք ինչ պիտի անէին այդ՝ կեանքի մէջ բացի անպիտանութիւններից, ոչ մի օգուտ չտուող կրօնաւորին. «Արձագանքը» արտասուքըն աչքերին ողբում և վայում է նրա մահը. այդ արդէն ցոյց է տալիս թերթի ինչ լինելը։

—

Ն. Վ. Թագաժառանգ իշխանը ամսոյս 30-ին կը մեկնի Դավրէժ։

—

Վաղը Կիւրակէ, Դարվազա Ղազվինի եկեղեցում տեղի է ունենալու Ազգային կոչւող Հոգաբարձութեան քւէարկութիւնը, առանց ո և է նախնական ժողովի. փոխանորդ վարդապետը միմիայն նամակներ է գրել ամէնքին և հրաւիրել որ 9 հոգու անուն գրեն և իրենց քւէները ուղարկեն կամ տանեն տուփը ձգեն։ Այդպիսի ընտրութիւնը առաջացնելու է շատ անտեղութիւններ. ինչով կարելի է երաշխաւորել որ ընտրւողները չեն հրաժարւի, քանի որ սկզբից ընտրելիներ չեն առաջարկուած. երկրորդ. ո՞վ է պատասխանատու որ քւէհամարը կը կատարվի ճշտութեամբ քանի որ ժողովրդից ընտրութեամբ մարդիկ չեն որոշուած դրա համար ևայլն ևայլն. դեռ չենք հաշվում այն, որ քւէները կարող են կամ շատ ցրւած լինել և կամ ստւել այնպիսի անձերի, որոնք միմեանց գաղափարակիցներ չեն և չէին կամենայ միմեանց հետ գործել։ Ընդհ. ժողով էր կարևոր գումարել ընտրութեան ձեռնարկելուց առաջ. հետաքրքիրէ թէ քւէատուփից ովքեր դուրս կը գան մեր ամէն հասնողի ձեռք խաղալիք դարձած հրապարակի վրայ արշաւելու համար։ Հետևանքի համար կը խօսենք յաջորդ անգամ։

—

Սպահանից գրում են, որ ամսիս 11-ին, երկու տարուց ի վեր հաստատած Որբուհեաց խնամակալութիւնը իր երկրորդ տարեդարձի հանդէսը կատարեց Ս. Կատարինէ Օր. դպրոցի 37-րդ տարեդարձի հետ միացնելով։ Հանդէսը շքեղ անցաւ, սրահը լիքն էր կանանց բազմութեամբ։

—

Դավրէժից, Արամեան դպրոցի տեսուչի համար տխուր լուրեր են հաղորդում մեզ. եթէ այդ լուրեր ճիշտ են, ինչու համար դպրոցի հոգաբարձութիւնը տեսուչ վարձելու ժամանակ, փոխանակ դիմելու զանազան վաճառականների, չէ դիմում ձեռնհաս հաստատութիւնների և կամ ինչու չէ հետաքրքրվում տեսուչ լինելու անձի ուսումնական ցենզովը. մինթէ հոգաբարձութիւնը կարծում է թէ ամէն մի հասարակ դպրոցից ելած անձի գործ է տեսուչ լինել Արամեան կամ որևէ այլ դպրոցում։ Յոյս ունինք որ ապագայ տարւայ համար հոգաբարձութիւնը աւելի լաւ կ'անի իր ընտրութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Եւրոպական շատ լրագիրներ, ի թիւս որոց «Figaro» և Նիւ-Եօրքի «New-York-Herald»-ը, երբ Ֆրանսական մի քանի լրագիրների շանտաժխտութիւնը բացւեց, կծու լեզւով և զայրացկոտ բառերով սկսել էին ամէն տեսակ նախատինք ուղղել այդ «փողի համար ճշմարտութիւնը ծախող խաբեբաներին, աւազակներին»... Եւ մարդիկ ասում էին—«Օ՛, որքա՜ն լաւ, ազնիւ լրագիրներ են այդ «Figaro-ն» և «New-York-Herald» Անցնում են հազիւ մի քանի ամիս, Ֆրանսական թերթերի շանտաժների դատը դեռ չէ վերջացել և ահա նոյն այդ «Figaro» և New-York-Herald-ը։ հազարներով կաշառք են վերցնում, որ ճշմարտութիւնը ուրանալով, հայերի մասին վատ խօսեն, նրանց պարսաւեն և Հայաստանում եղած աղէտների մէջ անգամ նրանց մեղաւոր ճանաչեն։

Կաշառուած թերթերն են, Figaro, Berliner Tageblatt»—այդ հրէական գծուծութիւն բուրող թերթը—Նիւ-Եօրքի «New York-Herald» յայտնի լրագիրը, որ 10000 տալէր է վերցրել մի բուռ թշւառ հայերի մեղաւոր ճանաչելու համար ամէն բանի, ամէն բանի մէջ... Բօստոնի «Herald» թերթն է միայն, որին առաջարկուած լինելով 5000, մերժում է հետևել իր անազնիւ պաշտօնակիցներին...

Բաւական չէ այդ. մի ոմն էլ Ֆսեմէնէս անունով, Դոնքիշոտի հայրենակից, անշուշտ բաւական փող առնելով, Անգլիա ոտքի տակ է տալիս, հայերի դէմ է գործում թէ դատախօսութիւններով և թէ բրոշիւրներով.... Ականջիս են հնչում «Ֆաուստում» Մեֆիստոֆելի երգի սոյն տողերը։

Le Veau d'or est toujours debout
On encense, Sa puissance.

Ոսկեայ հորթն է միշտ կանգուն.
Եւ խնկում են նրա զօրութիւն

Բարեբաղդաբար լուրջ և ազնիւ թերթեր մնում են դեռ, որ անկաշառ են— դրանք են «Times», «Daily-News» և «Standard»-ը. ապա թէ ոչ ինչ կը լինէր մեզ նման մի՝ աքցաններով հարուստներից կօպէկներ պոկող՝ ազգի հալը, եթէ պէտք լինէր «ոսկեայ հորթին» մէջ տեղ՝ ձգել, մեր իրաւունքները խնդրելու համար...

*** «Մուրճը» սկսել է նոր բանաստեղծներ գոյացնել, որոնք աստղերն են դողդողացնում, շարժում իրենց տեղից. չէք հաւատում,—կարդացէք «Մուրճ» № 2 մի ոմն Նոր բանաստեղծ Դերենիկ Դիմերճեանի սոյն տողերը (եր. 259)։

Աստղերը, որպէս վախկոտ կերոններ։
Լուռ դողդողում են դառնաչունչ քամուց...

Աստղերը այդպէս դողդողացնե՞լ և այն էլ քամո՛ւց... ո՛հ, ինչ գիտնական մարդ է այդ բանաստեղծը. հարկաւոր է, նրա օգտին, փոխել Կեպլերի Լապլասի ևայլ գիտնականների տիեզերքի սիստեմի ենթադրութիւնը և ընդունել, որ աստղերը դողդողում են Դերենիկ Դիմերճեանի բանաստեղծական «դառնաշունչ քամուց»... Բայց մէկն ասենք և միւսը չը մոռանանք. «Մուրճը» ունի նաև սիրուն ոտանաւորներ, որպիսիքն են № 1-ում Յակովբ Յակովբեանի «Քիւրդի Տուլին»-ը, որ յիշեցնում է Գէօթէի սառսուռ ազդող Erlköning (Անտառային արքայ) բանաստեղծութիւնը։ Իսկ № 2-ում Ա. Ծատուրեանի հետևեալ ոտանաւորը, որ արժէ ամբողջապէս մէջ բերել։

Քեզ համար է իմ տանջանքս,
Ճշմարտութեան գաղափար!
Թող քեզ զոհուի մատաղ կեանքս—
Ես ապրում եմ քեզ համար!
Կեանքի կռւում քանիցս անգամ
Ես քեզ պաշտպան կանգնելով—
Հալածեցին ինձ անգգամ
Մարդիկ—ոյժս ծաղրելով....
Հոգով աղքատ, մտքով ակար—
Նոքա իմ ձայնն անաչառ
Ջա՛ն ջանացին խեղդել իսպա՛ռ...
Սխալվեցին չարաչար!
Եւ երբ նոցա սև սրտերին
Խօսքս դիպաւ, որպէս նետ,
Նոքա փրփուր բերաններին,
Թո՛յն խառնեցին հացիս հետ...
Բայց դու յուզի՛ր, յուզի՛ր կեանքս,
Ճշմարտութեան գաղափար!
Դու ես իմ ոյժն, իմ եռանդս.
Ես ապրում եմ քեզ համար!

Մեր սրտիցն է խօսում բանաստեղծը. էհ այո, «Քեզ համար է իմ տանջանքըս ճշմարտութեան գաղափար»....

«Մուրճի» միւս յօդուածների մէջ աչքի է խփում Վ. Փափազեանցի «Նամակներ Անգլիայից» II նամակը, ուր բանաստեղծական կերպով նկարագրելով գոթական ճարտարապետութիւնը, զայրոյթ է արտայայտում այն թշուառ պատւարի դէմ որին մարդկային ուղեղը հասնելուց յետոյ, կանգ է առնում։

Սահման....—գոչում է նա—այդ բառի գոյութիւնն ստորացուցիչ է։ Իւրաքանչիւր սահման, լինի նա գիտութեան դրանձն իսկ, մի բռնաւորական ձգտումն է»։

Ամսագրի խմբագիրը «սահման» բառը limite բառն է ընդունել և գիտողութիւն է անում յօդուածագրին մէջ բերելով Կանտի խօսքերը, մինչ յօդուածագիրը «սահման բառը» «borne, lien» բառի փոխարէն է գործածել (որ սխալ է, պէտք է պատւար գործածէր) և դրա համար է որ քիչ հեռու նա ձայնում է «Գոհ չը լինենք երբէք. այդ տեսակ պատամբութեան, դժգոհութեան մէջն է գիտութեան և մարդկութեան պրօգրէսը... վայ նրան ով սահման (պատւար) է սիրում, գոհ է և կշտանալ գիտէ...»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ռէյխստագը ընդունեց փետրվարի 8-ին այն օրինագիծը, որով վերանում է ժէզուիտների արտաքսման օրէնքը։ Եզուիտները ուրեմն դեռ մնում են այդ երկրում։

—Ֆրանսական թերթերը հաղորդում են մի նոր գիւտի մասին։ Մի Դոմինիկեան վարդապետ հնարել է գրաշարութեան մեքենայ որ մի ժամում 50000 տառ է շարում։ «Figaro» թերթը մանրամասն նկարագրում է մեքենան. Կ. Պօլսի «Հայրենիք» թերթը թարգմանել է այդ նկարագրութիւնը։

—Հռոմից հեռագրում են «Daily Cronicl» լրագրին, որ հաստատ աղբիւրներից դուրս եկող լուրերը յայտնում են թէ եռակի դաշնակցութիւնը, երեք տէրութիւնների մէջ, այս տարի նորոգւելու է, պատերազմական մի աւելի ընդարձակ պայմանագրութիւնով։ Ասում են որ դաշնագրութիւնը հրատարակւելու է։

—Խոլերան շարունակվում է Կ. Պօլսում։

—Հիւսիսային և Բալթիկ ծովերը միացնելու ջրանցքը բացւելու է, շատ տէրութիւններ մասնակցելու են նրա բացման հանդէսին. Ներկայ են լինելու շատ ինքնակալներ և նաւատորմիղներ։ Ջրանցքը սկսել է պեղւել 1889 թւին, երկարութիւնն է 98 քիլոմետր լայնութիւնը 22—26 մետր և խորութիւնը 9 մետր. Նա մատչելի է բոլոր նաւերին, պեղելու ծախսը է եղել 175 միլիոն։ Ջրանցքի եզերքները միացրած են երկու մեծ երկաթեայ կամուրջներով, որոնց տակից ազատ կարող են անցնել ամեն տեսակ նաւեր։

—Ինֆլուէնցիան տարածվում է նոյնպէս Պետերբուրգում, առաջին մեծ զոհը եղել է ռուս յայտնի գրող Լէսկովը։

—Լինտհէյում, փետր. 25-ին վախճանվել է աւստրիական յայտնի գրող Զախեր-Մազօխը, որի գրւածքներից հայերէն թարգմանւած կայ միայն «Կայէնի կտակը» Րաֆֆիի թարգմանութեամբ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի առաջարկութիւն տնտեսագէտներին։—Թէհրան եկած վարդապետը իր մի քարոզում նկատեց, որ Թէհրանի հայ ժողովուրդը վերջին տարիներում նիւթական բարգաւաճ դրութեան մէջ է գտնւում. խորհուրդ ենք տալիս բոլոր տնտեսագէտներին ժողովրդի տնտեսական վիճակի մասին ճիշտ տեղեկութիւն հաւաքելիս միշտ դիմել վարդապետներին և քահանաներին, որովհետև սրանք ամենից ճիշտ տեղեկութիւնը կարող են ունենալ այդ մասին։

—

Մի կարևոր նախազգուշութիւն նուիրատուներին։—Նուիրատուութիւնից առաջ մանրակրկիտ խուզարկութեան ենթարկեցէք նուիրահաւաքի գրպանները և եթէ այս վերջիններս ծակ յայտնւեն, որ շատ յաճախ է պատահում մեր մէջ, ամուր կաչւով կարկատել տւէք։ Անկարելի է թւել այն բոլոր վնասները, որոնք առաջ են գալիս այդ կարևոր նախազգուշութիւնն անհոգութեամբ զանց առնելուց։ Մենք երևի շուտով միջոց կունենանք հազարաւոր այդպիսի դժբաղդ դէպքերից մէկը արձանագրելու։

Նիչ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնդոն. 24 մարտ (ն. տ.) Ամբողջ Բրիտանիայում պատահել է սաստիկ փոթորիկ երէկ և այսօր. մի քանի նաւերի կորուստը յայտնվում է, մի քանի մարդիկ էլ Լոնդոնում և շրջակայքում մնացել են քանդւող պատերի տակ։

Եօկահամայ. 25 մարտ Հաւատացնում են որ Լիհունգ Չանգին տւած վէրքը թեթև է։ Միկադօն և ճապօնական մինիստրները իրենց խորին ցաւակցութիւնն են յայտնել այդ նախատինքի համար. Միկադօն իր անձնական բժիշկն ուղարկել է վիրաւորին ծառայելու համար։

Լոնդոն. 27 մարտ Վերջապէս ճապօնացիք յաջողեցին Պեսկադօրում ցամաք իջնել և գրաւեցին մի քանի կէտեր։

Բերլին. 27 մարտ Ինչպէս կարգադրւած էր, գերմանական կայսրը գնաց Բիսմարկին այցելութեան երէկ, նրա 80-րդ տարեդարձի առթիւ։

Բերլին. 28 մարտ Herr Buol, կղերականների պատգամաւորը, ընտրւեց րէյխստագի պրեզիդենտ։

Լոնդոն. 28 մարտ Սպանեական կառավարութիւնը եռանդուն պատրաստութիւն է տեսնում Կուբայում խեղդելու համար յեղափոխութիւնը. 7000 զօրք անմիջապէս ուղարկւեց այդ կղզին։—Լուր է հասնում որ վարակիչ հիւանդութիւնները մեծ կոտորած են անում չինացոց մէջ։—Խօլերա է ընկել Պորտ-Արտուրը ամրացնող զօրքի մէջ. շատեր մեռել են. ճապօնացիք զգուշութիւններ են ձեռք առել հիւանդութեան դէմ։ Բելգիական կառավարութիւնը 7000 պահեստի զօրք զէնքի կանչեց այն շարժման դէմ դնելու համար որ աւելի ոյժ է ստանում սոցիալիստների շնորհիւ գործաւոր դասակարգի մէջ։

Եօկահամա. 28 մարտ Սպասվում է որ Լիհունգ-Չանկը շուտով կառողջանայ և կը սկսի խաղաղութեան բանակցութիւնները։

Լոնդոն, 28 մարտ Ֆրանսիական երկու էկսպեդիցիաներ են երևել Նիգերի գետաբերանի մօտ. Սըր Գրէյ համայնքների ժողովում տւած մի քանի հարցերին պատասխանեց որ անմիջապէս պիտի Ֆրանսիական կառավարութիւնից բացատրութիւն խնդրւի այդ էկսպեդիցեաների համար։ Այստեղ հասած լուրերը հաստատում են որ զի՛նադուլը տևելու է մինչև ապրել 20-ը։ Եթէ մինչև այդ ժամանակ խաղաղութեան բանակցութիւնները անյաջող եղան, երկու կառավարութիւնները նոր գնդեր դուրս կը բերեն։

Լոնդոն. 29 մարտ. Համայնքների պալատում Սըր Ե. Գրէյ պատասխանելով մի հարցի ասաց որ անմիջապէս կը ծանուցւի Ֆրանսական կառավարութեան գաղիական երկու էկսպեդիցիաների ներկայութեան համար այն հողերի վրայ, որոնք գտնվում են անգլիական արքայական Նիգերի ընկերութեան հովանաւորութեան տակ։ Սըր Պատրիկ Գրանդ Էտւ. Գրէյ և արտաք. գործոց փոխ սեկրետարը կարևոր ծանուցումներ արին անգլիական և ֆրանսական յարաբերութիւնների մասին։ Լուրերի համեմատ, Ֆրանսացիների Նիգերում երևացած լինելը լուրջ կերպարանք ունի, բայց Անգլ. կառավարութիւնը դեռ սպասում է իր Ֆրանսիային ուղղած զեկուցման պատասխանին։ Է. Գրէյը վերջացնելով իր խօսքը ժողովում, յայտնեց որ կաշխատի միշտ բարեկամ մնալ Ֆրանսիայի հետ։

Եօկահամա 30 մարտ. Լեհունգ Չանգին եղած նախատինքի փոխարէն Միքատօն (ճապօնիայի թագաւորը) հրամայել է անպայման զինադուլ անել մինչև խաղաղութեան դաշինքների վերջաւորութեան հասցնելը։ Լորդ Կիմբըրլէյ երէկ ընդունեց հայերի դրութիւնը բարեփոխելու համար կազմւած պատգամաւորութիւնը, դժւարութիւններ յայտնեց այդ խնդրի համար, վախենալով որ դրանով արևելեան հարցը կը զարթնի նորից։ Լորդը յայտնեց որ Ռուսիան և Ֆրանսիան պիտի համոզւած լինէին որ մի մշտական դարման կարևոր է այդ խնդրի համար։

Փարիզ. 30 մարտ։ Ֆրանսական թերթերը խօսելով Սըր Գրէյի համայնքների ժողովում խօսածների մասին, յայտարարում են որ Ֆրան. կառավարութիւնը ճանաչում է եգիպտական իրաւունքը վերին Եգիպտոսում և ուրիշ ոչ-ոքինը։

Փարիզ 30 մարտ, Միկատօի հրովարտակով հրամայւած զինադադարի հիման վրայ, ճապօնացիք պիտի պահեն բոլոր իրենց գրաւած դիրքերը։

Լոնդոն 31 մարտ. Այն ժամանակւանից որ Բ, դուռը թոյլադրել է թերթերի թղթակիցներին Հայաստան մտնել հաստատվում են բոլոր տեղերում եղած բարբարոսութիւնները. «Timps»-ի սեփական յատուկ թղթակիցը կոտորւածների թիւը 10000-ի է հասցնում։ Երէկ որոշւեց յատուկ ժողով հրաւիրել։ Լորդ Րօզբէրին գնաց Լոնդոն, ներկայ լինելու այն միտինգին որ կոչւել է «Հայկական և Նիգերի հարցերի» մասին վիճաբանելու համար։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դավրէժու «Դպրոցական Բարեսիրական» ընկ. վարչութիւնը յայտարարում է հետևեալ նուիրատուաց ցանկն, որոց վարչութիւնս, հրապարակօրէն իր խորին շնորհակալութիւնն է յայտնում։

Պ.պ. Վ. Վարդանեանցից 30 ղռան, Յ. Աֆտանդիլեանց 30 ղ., Յ. Յովակիմեանց 30 ղ., Ա. Մ. Եղիանց 30 ղ., Ս. Բժշկեանց 10 ղ., Ա. Տ. Զաքարեանց 20 ղ., Յ. Բալեանց 20 ղ., Խ. Խաչատուրեանց 10 ղ., Տ. Մ. Աստուածատուրեանց 30 ղ. Բ. Տ. Գրիգորեանց 5 ղ., Մ. Թուրաբեանց 30 ղ., Գ. Ալլահվերդեանց 10 ղ., Զ. Միրզայեանց 10 ղ., Յ. Սրապեանց 10 ղ., Ն. Յովսէփեան 5 ղ., Ա. Ածատուրեանց 10 ղ., Օ., Տակովբեանց 5 ղ., Հ. Յովհաննէսեանց 10 ղ., Մ. Վարդանեանց 10 ղ.։ Ընդհանուր գումարն է 315 ղռան։ Վարչութիւն «Դպրոցական Բար. Ընկ.

ՀԱՇՈՒԷԿՇԻՌ
«ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱՑ» ԸՆԿ.

1894 յունիսից մինչև ց'31 դեկտեմբերի 1894 թուի

ՊԱՀԱՆՋՔ

Տօկոսով է գրված	750 ղ.	—	կոպ.
Զանազան պաշտօնչք	66 »	80	»
Ապառիկ անդամավճարք	76 »	80	»
Կարասիք	77 »	80	»
Պատրաստի ապրանք	330 »	—	»
Պատրաստի դրամ	100 »	80	»
	1402 »	20	»

ՊԱՐՏԻՔ

Պ. Սարգսեանցին պարտեմք	2 ղ.	20	կոպ.
Դրամագլուխ	1400 »	—	»
	1402 »	20	»

ԵՂԱԾ ԾԱԽՔԵՐ

Տան վարձք	100 ղ.	—	կոպ.
Զանազան ծախքեր	70 »	15	»
1894 սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի վերջ ընկ. ունեցած հրիավարժ աշակերտների համար եղած ծախք, գիրք թանաք, գրիչ, մատիտ, թուղթ և այլն և այլն	285 »	60	»
Ընդհանուր գումարն է	455 »	75	»

Երկու տարի է որ եղբայրս Դաւիթ Ճահվերդեան, երբեմն Նազարբեկեան, անունով անհետացել է. խնդրում եմ, եթէ որ և իցէ անձնաւորութիւն իմանում է նրա տեղը, ինձ իմաց տայ «Շաւիղի» միջոցով, մինչև իսկ եթէ մեռած լինի։ Նրա կերպարանքը այս է. 20 տարեկան, սև աչքերով, լիք և կարմիր երեսով. սև մազերով մի երիտասարդ է, ինքն էլ Դաւրիժեցի։ Որով պարտաւորեցած՝ շնորհակալութիւնս կը յայտնեմ «Շաւիղի» միջոցով։

1—3